

10234



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարարի պարտականությունները կատարող Արամ Մելնարյան



23, 09 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 196 - 24

Նախաձեռնող՝

«ԲԱԳՐԵՎԱՆԴ ՀԱՈՒՋ» ՍՊԸ
ք. Երևան, Ամիրյան փողոց 4/6

Գործունեությունը՝

Նոր Նորք վարչական շրջանի Բազրևանդ փողոց հ. 84, հ.84/1, հ.84/2, հ.88/2, հ.88/3, հ.88/4, հ.88/5, հ.88/18, հ.88/19, հ.88/20, հ.88/21, հ.90/15, հ.90/16, հ.90/17, հ.90/18, հ.90/19, հ.92, հ.92/1, հ.92/2, հ.92/3, հ.92/4, հ.92/21, հ.92/22, հ.92/23, հ.92/24, հ.94/20, հ.94/21, հ.94/22, հ.94/23, հ.94/24, հ. 96, հ.96/1, հ.96/2, հ.96/3, հ.96/4 հասցեներում բնակելի թաղամասի կառուցում
ք. Երևան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 196 - 24

«23» սեպտեմբեր 2024թ.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդ փողոցի հ. 84, հ. 84/1, հ.84/2, հ.88/2, հ.88/3, հ.88/4, հ.88/5, հ.88/18, հ.88/19, հ.88/20, հ.88/21, հ.90/15, հ.90/16, հ.90/17, հ.90/18, հ.90/19, հ.92, հ.92/1, հ.92/2, հ.92/3, հ.92/4, հ.92/21, հ.92/22, հ.92/23, հ.92/24, հ.94/20, հ.94/21, հ.94/22, հ.94/23, հ.94/24, հ. 96, հ.96/1, հ.96/2, հ.96/3, հ.96/4 հասցեներում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման ՇՄԱԳ հաշվետվություն

Նախաձեռնող՝ Փաստաթղթի տեսակը՝	«ԲԱԳՐԵՎԱՆԴ ՀԱՈՒԶ» ՍՊԸ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն/նախագիծ
Գործունեության տեսակը՝ Գտնվելու վայրը՝	«Բ» կատեգորիա Երևան քաղաք, Նոր Նորք վարչական շրջան, Բագրևանդ փողոց

Ներածական մաս. Փորձաքննության ներկայացված ՇՄԱԳ հաշվետվությամբ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջան Բագրևանդ փողոցի հ. 84, հ. 84/1, հ.84/2, հ.88/2, հ.88/3, հ.88/4, հ.88/5, հ.88/18, հ.88/19, հ.88/20, հ.88/21, հ.90/15, հ.90/16, հ.90/17, հ.90/18, հ.90/19, հ.92, հ.92/1, հ.92/2, հ.92/3, հ.92/4, հ.92/21, հ.92/22, հ.92/23, հ.92/24, հ.94/20, հ.94/21, հ.94/22, հ.94/23, հ.94/24, հ. 96, հ.96/1, հ.96/2, հ.96/3, հ.96/4 հասցեներում գտնվող հողամասերի տարածքում: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ 8-րդ կետի «ա» ենթակետի նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել բնակելի համալիրի նախագծային փաստաթղթերը՝

- ուսումնասիրվող տեղամասի ինժինեռաերկրաբանական հետազոտությունների եզրակացությունը,

- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,
- հողատարածքների սեփականության վկայականները



- ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 01/50-01-211-24 տրված՝ 18.04.2024թ.

- հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Թաղամասի կառուցման համար նախատեսվող տարածքը գտնվում է Բագրևանդի փողոցի հարավ-արևմտյան հատվածում: Հողամասը բաժանված է 35 գույքային միավորների:

Թաղամասն իր մեջ ներառում է բնակելի և հասարակական կառուցապատում: Բնակելի մասը բաղկացած է բազմաբնակարան բնակելի 4+1 հարկանի շենքերից, ինչպես նաև ընդհանուր կառուցապատման գերակշիռ մաս կազմող առանձին հողաբաժանումներից՝ անհատական, բլոկացված և կցաշար բնակելի տներից: Հասարակական կառուցապատման մեջ ընդգրկված են մինչև 5 հարկանի բազմաֆունկցիոնալ կենտրոններ: Տարածքում նախատեսվում է նաև կառուցել մանկապարտեզ և եկեղեցի:

Թաղամասը շենքերով կառուցապատելու ծավալատարածական հորինվածքի մշակման համար հաշվի է առնվել հողամասի հարավում և հարավ-արևմտյան հատվածում առկա և նոր նախատեսվող ցածրահարկ կառուցապատումները, ինչից ելնելով այդ մասերում մշակված է անհատական բնակելի, կցաշար, բլոկացված տներ: Թաղամասի տրանսպորտային մոտեցումներն ու սպասարկումները նախատեսված է Բագրևանդ փողոցից, ինչպես նաև Մոլդովական փողոցից սկիզբ առնող ներթաղային ճանապարհներից:

Մանկապարտեզը դիտարկված է որպես առանձին շենք համապատասխան հողաբաժնով:

Բազմաբնակարան բնակելի շենքերի կառուցապատումը ձևավորված է ներքին բակելիի շուրջ համախմբված շենքերի խմբից, յուրաքանչյուր շենքերի խումբ ունի ստորգետնյա միասնական ավտոկայանատեղիներ:

Բնակելի շենքերի մուտքերը նախատեսված են ճանապարհների արտաքին պարագծով, ինչը թույլ է տալիս ստանալ ընդարձակ կանաչապատ, խաղահրապարակներով հագեցած բակային տարածքներ: Արտակարգ իրավիճակների համար /հրշեջ մեքենաների մոտեցում/ դեպի բակային տարածքներ նախատեսված են մոտեցումներ և կոշտ ծածկույթով անցուղիներ:

Տրանսպորտային միջոցների մոտեցումները դեպի տարածք նախատեսվում է իրականացնել տարածքի գոյություն ունեցող ճանապարհների միջոցով: Նախատեսվող գործունեությունն իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություններ: Համալիրի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասերի մակերեսը՝ 146380 քմ,
- համալիրի վերգետնյա կառուցապատման մակերեսը՝ 48980 քմ - 33,5 %
- կանաչապատման մակերեսը՝ 59600 քմ 40,7 %



Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխագազերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախառնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամղիչով:

Պարճառաքանական մաս. Փորձաքննության շրջանակներում կատարվել է գործունեությանն առնչվող գոյություն ունեցող բնապահպանական և սոցիալական ելակետային պայմանների ուսումնասիրություն: Նախատեսվել է գործունեության իրականացման արդյունքում հնարավոր բնապահպանական և սոցիալական վնասակար ազդեցությունների կանխատեսումը և դրանց կանխարգելմանը, նվազեցմանը կամ բացառմանն ուղղված համապատասխան մեղմման միջոցառումներ, դրանց արդյունավետ իրականացման մեխանիզմներ: Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝

- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ,
- օդային ավազան արտանետումների՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում արտանետումների, հողային աշխատանքների հետ,
- հողային, ջրային ռեսուրսների օգտագործմամբ,
- արտակարգ իրավիճակների առաջացման հետ,
- թափոնների կառավարման հետ:

Բազմաբնակարան բնակելի համալիրի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների: Շահագործման փուլում բնակելի համալիրն ապահովված է լինելու բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամների համար տեղաշարժվելու հնարավորություններով և պաշտպանության միջոցառումներով, որոնց լուծումները նախատեսվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N 253-Ն հրամանի պահանջներին համապատասխան:



Էներգաարդյունավետության համար նախատեսված են ինժեներատեխնիկական համակարգեր, որոնք վերաբերում են՝ ջեռուցման համակարգերին, տաք ջրամատակարարման համակարգերին, օդի լավորակման համակարգերին, ընդհանուր օդափոխման և լուսավորության համակարգերին:

Եզրափակիչ մաս Հանրային ծանուցումը իրականացվել է համաձայն՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և Կառավարության 24 նոյեմբերի 2005 թվականի N 2343-Ն որոշմամբ սահմանված կարգի: Լսումներն իրականացվել են Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Հանրային լսումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինի թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցություններն իրենց բնույթով սահմանափակ են և կրում են ժամանակավոր բնույթ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները՝ շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով, շինարարության ընթացքում՝ ցանկապատել շինարարական հրապարակները, շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով:
- Կանաչապատումը կատարել Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան:
- Համաձայն ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438 որոշման 43-րդ կետի՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:
- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»



օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ բոլոր արտադրական վտանգավոր օբյեկտները (կաթսայատուն, վերելակ և այլն) օրենքով սահմանված կարգով ներկայացնել տեխնիկական անվտանգության փորձաքննության:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բագրևանդ փողոցի հ. 84, հ. 84/1, հ.84/2, հ.88/2, հ.88/3, հ.88/4, հ.88/5, հ.88/18, հ.88/19, հ.88/20, հ.88/21, հ.90/15, հ.90/16, հ.90/17, հ.90/18, հ.90/19, հ.92, հ.92/1, հ.92/2, հ.92/3, հ.92/4, հ.92/21, հ.92/22, հ.92/23, հ.92/24, հ.94/20, հ.94/21, հ.94/22, հ.94/23, հ.94/24, հ. 96, հ.96/1, հ.96/2, հ.96/3, հ.96/4 հասցեներում նախատեսվող բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության ՇՄԱԳ հաշվետվությանը տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան



«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Շուշանիկ Կարապետյան